ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 116 - Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի № 70-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի «Հաշվեքննիչ պալատի աշխատակիցների խրախուսման կարգը սահմանելու և Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մարտի 29-ի թիվ 7/6 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 70-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետը,

2) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, պարգևատրվող ժամանակահատվածի (բացառությամբ նոյեմբերի և դեկտեմբերի պարգևատրվող ժամանակահատվածի) ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ստորաբաժանման աշխատակիցների կատարողականի գնահատման հիմքով, էլեկտրոնային

փոստի միջոցով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է ներկայացնում համապատասխան ստորաբաժանման համակարգողի (առկայության դեպքում) հետ համաձայնեցված պարգևատրման առաջարկ (ցուցակ)՝ ըստ աշխատակիցների տոկոսային հարաբերության: Տվյալ տարվա նոյեմբերի և դեկտեմբերի պարգևատրման համար սույն կետով նախատեսված առաջարկը ներկայացվում է դրա վերաբերյալ համապատասխան հանձնարարականն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:»:

3) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Իրավական ակտերի ընդունումից հետո, Պատասխանատու ստորաբաժանումը, պարգևատրվող ժամանակահատվածին (բացառությամբ նոյեմբերի և դեկտեմբերի պարգևատրվող ժամանակահատվածի) հաջորդող ամսի 15-ին կամ դրան նախորդած վերջին աշխատանքային օրը կամ որևէ պատճառով այդ ժամկետը լրացած լինելու դեպքում՝ հնարավոր կարճ ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է վճարումների կատարումը: Նոյեմբերի և դեկտեմբերի համար պարգևատրումը վճարվում է համապատասխան իրավական ակտի ընդունումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ